

Հ Ր Ա Մ Ա Ն Թ Ի Վ - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

« »

2015 թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

**«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով և 68-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի ապրիլի 20-ի N 195 որոշման 2-րդ կետը և «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 1.2-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը (կցվում է):
2. Հանձնարարել «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի տնօրեն Ս. Գրիգորյանի՝ ընկերության կանոնադրության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ա. Մկրտչյանի վրա:

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ _____

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«ԳՐԱՆՑՎԱԾ Է »

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ N ՀՐԱՄԱՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 27.01.1998Թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 286.120.03094

ՎԿԱՅԱԿԱՆԻ ԹԻՎ 01Ա040067

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թիվ _____ փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժնի

կողմից

«_____» _____ 2015թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ

«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ Ա Ն

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ - 2015

«Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 1.2-րդ կետում «սեպտեմբերի» բառը փոխարինել «ապրիլի» բառով.

բ) 2.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.2. Ընկերության գործունեության առարկան է՝

- «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի թաղային համայնքների իրավական ակտերի տեղեկագիր». «Քաղաքային և գյուղական համայնքների իրավական ակտերի ժողովածու» պարբերականների և պարտադիր հրապարակման ենթակա, ինչպես նաև այլ իրավական ակտերի, դրանց վերաբերյալ մասնագիտական մեկնաբանությունների՝ թղթի վրա և էլեկտրոնային եղանակով հրատարակում, վերահրատարակում (այդ թվում՝ թարգմանաբար), բաժանորդագրություն և տարածում.
- իրավական ակտերի էլեկտրոնային շտեմարանի պահպանում, կառավարում և սպասարկում
- **պաշտոնական ինկորպորացիայի ենթարկված իրավական ակտերի էլեկտրոնային ժողովածուի ստեղծում.**
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն՝ Հիմնադրի թույլտվություն:

Ընկերությունն ունի օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակներ իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրում է համապատասխան քաղաքացիական պարտականություններ:

Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, ընկերությունը կարող է զբաղվել միայն հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված՝ 2000 թվականի նոյեմբերի 15-ին) անբաժանելի մասը: